

ԿԱՆՈՆ ԿԵՆԴԱՆԱՐԱՐ ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Քահանան իր կողքին ունենալով Կնքահայրը, մկրտելիք երախային ծնողները եւ պարագաները, կը կանգնի ատենին մէջտեղը, եւ կ'ըսէ.

Կ'օրնենք մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ: Թող գա՛յ արքայութիւնդ: Թող կատարուի՛ քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ Չարէն ազատէ՛: Որովհետեւ քո՛ւկդ եմ միշտ՝ արքայութիւնը, գորութիւնը եւ փառքը. ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած,
դուն՝ որ ա՛յնքան ողորմած ես.
քու անսահման գթութեամբդ
իմ յանցանքս ներէ՛ ինձի:
Ամբողջութեամբ մաքրէ՛ զիս իմ անօրէնութենէս,
եւ իմ մեղքէս զիս սրբէ՛:
Ուստի ներումիդ ցօղով սրբէ՛ զիս, եւ պիտի մաքրուիմ,
լուա՛ զիս, եւ ձիւնէն աւելի
մաքուր պիտի ըլլամ:
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ո՛վ Աստուած,
նոր եւ ուղիղ հոգի՛ դիր իմ ներսիդիս:
Փրկութեանդ ցնծութի՛ւնը տուր ինձի,
եւ քու կամքիդ հնազանդ
հոգի մը դիր իմ մէջս:
Բա՛ց իմ շրթներս, ո՛վ Տէր,
թող բերանս քեզի օրհնութի՛ւն երգէ:
Փառք տանք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին,
այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ ԲԿ.

Երրորդութիւն անբաժանելի եւ զօրութիւն երկնայի՛ն՝ ըստ ծագեալ յաշխարհ. նմա հանդը՛ ք զօրհնութիւնս երգով:

Անբաժանելի Երրորդութիւնը՝ երկնային գօրութիւնը լոյսի պէս ծագեցաւ աշխարհի վրայ. անոր օրհնութի՛ւն երգենք:

Որ էջըն յերկնի՛ց, այսօր եւ հանդեաւ Պապեազն ճշմարիտ սուրբ Հօգին. նմա հանդը՛ ք զօրհնութիւնս երգով:

Ճշմարիտ սուրբ Հոգին որ [-Քրիստոսի մկրտութեան ապենկ] երկինքէն իջաւ, այսօր ալ առաքեալներուն վրայ հանգչեցաւ. անոր օրհնութի՛ւն երգենք:

Որ ի խորհուրդս փրկականս այսօր ընդ իջանել յառաքեալն ծանուցաւ մարգարէին. նմա հանդը՛ ք զօրհնութիւնս երգով:

Այսօր [Ս. Հոգիին] առաքեալներուն վրայ էջքը փրկական խորհուրդներու կարգին յայրնուած էր [Յովէլ] մարգարէին. անոր օրհնութի՛ւն երգենք:

ՔԱՐՈՉ

Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ:
Աղաչենք, որ Տէրը քաւէ այս երախային մեղքերը, ներէ անոր յանցանքները եւ իր
ողորմութիւնը հովանի ըլլայ անոր վրայ:
Ողիւմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր:

ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր Աստուած, որ մեծ ես եւ բոլոր արարածները կը փառաւորեն քեզ, քու ահեղ եւ
ամենագօր անունիդ ապաւինելով, այս ծառադ կու գայ իր գլուխը քեզի խոնարհեցնելու: Քու
ողորմութեամբդ նայէ՛ իրեն, եւ քու ամենայաղթ անունդ իրեն տալով՝ հեռացո՛ւր եւ վանէ՛ իրմէ
Չարին բոլոր խորհուրդները, խօսքերն ու գործերը, որոնցմով անիկա սովորաբար մարդիկը
կը խաբէ ու կորուստի կը մատնէ:

Եկրնային շնորհքովդ լեցուր այս երախան. ուրախացո՛ւր զայն՝ քու ամենաբարի
անունովդ քրիստոնէայ կոչումը շնորհելով իրեն. եւ զայն արժանի ըրէ մկրտութեան, որ
երկրորդ ծնունդ մըն է՝ սուրբ Աւագանէն: Որպէսզի քու Սուրբ Հոգիդ ունենալով՝ սուրբ
Եկեղեցիիդ մարմինը եւ անդամը ըլլայ. եւ անարատ քրիստոնէութեամբ մը ապրելով այս
աշխարհի մէջ, հանդերձեալ կեանքի երանութեան հասնի բոլոր սուրբերուդ հետ միասին,
փառաւորելով քեզ, անփոփոխելի Տէր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանան 3 անգամ խոնարհելով երախային փոխարէն 3 անգամ կ'ըսէ.

Մօրս արգանդէն իսկ քեզի՛ յարեցայ,
ծնելէս իսկ առաջ՝ դո՛ւն ես իմ Աստուածս:

**Ապա բոլորը կը դառնան արեւմուտք: Կնքահայրը երախան իր գիրկը առնելով Քահանային հետ 3 անգամ
կ'ըսէ.**

Կը հրաժարինք Սատանայէն եւ անոր բոլոր տեսակի խաբէութիւններէն, անոր
պատրանքներէն, խորհուրդներէն, ճամբաներէն, անոր չար կամքէն, չար հրեշտակներէն, չար
գործակիցներէն, անոր չար կամքը կատարողներէն, եւ անոր ամբողջ չար զօրութենէն,
ամբողջութեամբ կը հրաժարինք:

Յետոյ դէպի արեւելք կը դառնան: Քահանան կ'ըսէ.

Եւ կը դառնանք դէպի Աստուած եւ անոր գիտութիւնը:

Այստեղ կ'արտասանեն Հաւատամքը

ՀԱՒԱՏԱՄՔ

Կը հաւատանք ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին: Կը
հաւատանք Գաբրիէլի ձեռամբ ատուումինմ, Քրիստոսի ծնունդին, մկրտութեան,
չարչարանքներուն, խաչելութեան, երեքօրեայ թաղումին, յարութեան, աստուածապէս
համբառնալուն եւ Հօր աջակողմը նստելուն, եւ ահեղ ու փառաւոր երկրորդ գալուստին:
Կ'ընդունինք եւ կը հաւատանք:

ԱՒԵՏԱՐԱՆ

Սարկիսապը.

Ալէլուիա, ոտքի՛:

Քահանայան. Խաղաղութիւն բոլորին:
 Դպիրները. Նաեւ քու հոգիիդ:
 Սարկաւագը. Երկխոսութեամբ լսեցէք:
 Քահանայան. Յիսուս Քրիստոսի Աւետարանը, Մատթէոսի համաձայն: (28.16-20)
 Դպիրները. Փա՛ռք քեզի, ո՛վ Տէր, մեր Աստուածը:
 Սարկաւագը. Ուշադիր եղէք:
 Դպիրները. Աստուած կը խօսի:
 Քահանայան. Դրուագ մը՝ Յիսուս Քրիստոսի յարութեան յաջորդող դէպքերէն:

Իսկ Տասնըմէկ աշակերտները գացին Գալիլէա, այն լեռը ուր Յիսուս ժամադրուած էր իրենց հետ: Երբ տեսան զինք, երկրպագեցին իրեն. բայց ոմանք տարակուսեցան: Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց հետ: Ապա ըսաւ.

- Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինձի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս դրկեց, այնպէս ալ ես ձեզ կը դրկեմ: Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք: Չանոնք մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց ստրվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի, եւ ահա միշտ ձեզի հետ պիտի լլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը:

Ապա կը մտնեն Դաս, կու գան բեմին առջեւ, երգելով.

**Չորսունվեանն քու դուռնն բա՛ց մեզ Տէր.
 եւ արժանի արա՛ դմեզ լուսեղէն յարկաց քոյ
 ընդ սուրբքս քո՛ :**

**Ողորմութեանդ դուռը բա՛ց մեզ առջեւ,
 Տէր, եւ սուրբերուդ հետ միասին մեզ քու
 լուսեղէն յարկերուդ արժանի ըրէ՛:**

**Ի սրտորաստեալ քո յօվեւիւն՝ նրա սրբոց քոյ
 ընկալ եւ ըզմեզ Փրկիչ յորդեգրովին Ի
 դպրութեանն կենա՛ց :**

**Քու սուրբերուդ հետ միասին մե՛զ ալ
 ընդունէ քու պատրաստած օթեաններուդ
 մէջ, որպէս Կեանքի Գիրքին մէջ
 արչանագրուած որդեգիրներ:**

**Ի նրստիդ քո յառնի՛ դասուոր աշեզ
 ինայեա՛ յարարածըս քո, բարեխօսութեամբ
 եւ սղօթիք սուրբ ճրգնաստրա՛ցն:**

**Երբոր արեանդ նստիս, ո՛վ ահեղ
 Դատարոր, ճգնաւոր սուրբերուդ
 բարեխօսութեամբն ու աղօթքներովը
 ինայէ՛ մեզի քու արարածներուդ:**

ՔԱՐՈՉ

Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ:

Այս երախային համար աղաչենք մարդասէր Աստուծոյ, որ իր առատ ողորմութեամբ գթայ անոր, զայն արժանի ընէ մկրտութեամբ վերստին ծնելով անապական նկարագիր մը իր վրայ առնելու, եւ զայն իրեն հաւասցողներու խումբին հետ դասելով՝ իր ողորմութեամբը փրկէ: Ամենական Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ զայն եւ ողորմէ՛ իրեն:

Ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր:

ԱՂՕԹՔ

Մարդասէր Տէր, ընդունէ՛ քեզի ընծայուած այս երախան: Մաքրէ՛ ստոր միտքն ու խորհուրդները Հակառակորդին բոլոր ազդեցութիւններէն, եւ զայն արժանի ըրէ՛ սուրբ Աւագանին մէջ լուսցումով՝ մարդկային հին մեղքերը թօթափելու եւ քու շնորհքիդ լոյսով նորոգուելու: Որպէսզի մեզի հետ ի՛նք եւս փառաւորէ քեզ՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դէպի մկրտութեան Աազան կերթան, երգելով.

ՀՈԳԵԳԱՆՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ ԳՉ.

**Արեգս' կն արդարութեան Քրիստոս
ծաղեալ յաշխարհ հաղածեաց ըզխաւարն
անդիատութեան, եւ յետ մահու եւ յարութեան
համբարձաւ առ Հոգի յորմէ՛ ծաղեաց. որ
երկրորդապէս յերկնաւորաց եւ յերկրաւորաց
ընդ ՀՕՐ եւ Սո՛ւրբ Հոգւոյն. վասն որոց եւ
մէք երկիր սրբանեմք ՀՕՐ հոգւով եւ
ճը՛շման րատութեան մք:**

**Արդարութեան Արեգակը՝ Քրիստոս այս
աշխարհին վրայ ծագելով՝ Կրօնական
խաւարը փարսպեց, իսկ մահուրնէ՛ ու
յարութենէն ետք համբարձաւ Հօրը քով,
որմէ՛ եկած էր: Երկնաւորներ ու
երկրաւորներ անոր կերկրպագեն, Հօրը
եւ Սուրբ Հոգիին հետ միասին ուստի
մենք ալ հոգիով եւ ճշմարտութեամբ
երկրպագենք Հօրը:**

Չորը աազանին մէջ կը լեցնեն, խաչաճեւ, ըսելով.

Տիրոջ ձայնը ջուրերուն վրայ կը հնչէ.
Աստուծոյ փառքը կ'որոտայ
եւ անոր ձայնը կ'արձագանգէ ծովերու վրայ:

ԸՆԹԵՐՅՈՒՄ

**ԸՆԹԵՐՅՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(3.24-29)**

Ուրեմն Օրէնքը մեր խնամակալ դաստիարակը եղաւ, մեզ Քրիստոսի առաջնորդելով, որպէսզի հաւատքով արդարանանք: Բայց հիմա որ հաւատքը եկաւ, այլեւս դաստիարակի պէտք չունինք, որովհետեւ Յիսուս Քրիստոսի հաւատալով՝ բոլորդ ալ Աստուծոյ որդիներ եղաք: Անգամ մը որ Քրիստոսի միանալով մկրտուեցաք, այլեւս Քրիստոս է որ կ'ապրի ձեր մէջ: Ալ ո՛չ Հրեայի եւ հեթանոսի խտրութիւն կայ, ո՛չ ստրուկի եւ ազատ մարդու, ո՛չ ալ արուի եւ էգի, որովհետեւ Քրիստոսի միանալով՝ բոլորդ ալ մէկ եղաք: Արդ ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ դուք Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Դպիրները կ'եղանակեն.

Ալէլուիա, Ալէլուիա.
Տէրն է հովիւս. կը հոգայ պէտքերս:

ԱԻՆՏԱՐԱՆ

Սարկաւագը. Ալէլուիա, ոտքի՛:
Քահանան. Խաղաղութի՛ւն բոլորին:
Դպիրները. Նաեւ քու հոգիիդ:
Սարկաւագը. Երկիւղածութեամբ լսեցէք:
Քահանան. Յիսուս Քրիստոսի Աւետարանը, Յովհաննէսի համաձայն: (3.1-8)
Դպիրները. Փա՛ռք քեզի, ո՛վ Տէր, մեր Աստուածը:
Սարկաւագը. Ուշադի՛ր եղէք:
Դպիրները. Աստուած կը խօսի:

Քահալուսև.

Դրուագ մը՝ Յիսուս Քրիստոսի կեանքէն.

Նիկողդեմոս անունով Փարիսեցի մարդ մը կար, Հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ անոր.

- Վարդապետ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ որկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ որ կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ:

Յիսուս պատասխանեց անոր.

- Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը: Նիկողդեմոս հարցուց անոր.

- Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի՞ քան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի:

Յիսուս պատասխանեց.

- Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնանի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիք: Հովը ո՛ր որ ուզէ՝ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին:

ՔԱՐՈՉ

Աղաչենք, որ Տէրը Սուրբ Հոգիին ներգործութեամբ այս ջուրը սրբէ:

Ողորմէ՛ Տէր:

Աղաչենք Տիրոջ, որ ասոր մէջ մկրտուողը լոյսի որդի դարձնէ:

Աղաչենք Տիրոջ, որ այս երախան սրբութեան անօթ դառնայ աստուածատուր խորհուրդները ընդունելու համար:

Ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր, ողորմէ՛ Տէր:

ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, մեր Աստուածը, կ'աղաչենք՝ քու Սուրբ Հոգիդ որկէ եւ սրբէ՛ այս ջուրը, ինչպէս դուն, ո՛վ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, քու ամենամաքուր անմեղութեամբդ Յորդանան գետը մտնելով սրբեցիր զայն, որպէսզի անհկա օրինակ ծառայէ մկրտութեան այս Աւագանին, որմէ բոլոր մարդիկ վերստին կը ծնին: Այնպէս ըրէ որ այս ջուրին մէջ այժմ մկրտուելով՝ այս երախան արժանի ըլլայ իր մեղքերուն թողութիւն գտնելու, Սուրբ Հոգին ընդունելու, երկնատուր Հօրդ որդեգրուելու եւ երկինքի արքայութեանդ ժառանգորդ դառնալու: Որպէսզի մեղքերէ սրբուած ըլլալով՝ այս աշխարհի մէջ քու կամքիդ համաձայն ապրի, իսկ հանդերձեալ կեանքի մէջ անպառ բարիքներդ վայելէ բոլոր սուրբերուդ հետ միասին, ուրախութեամբ շնորհակալութիւն յայտնէ եւ միշտ փառաւորէ քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից:

Ապա կնքահայրը երախան կը տանի որ մերկացնեն, եւ յետոյ զայն մերկ կը բերէ Քահանային քով: Քահանան սուրբ Միռոնը ձեռքը առնելով՝ ջուրին վրայ կը խաչակնքէ ըսելով.

Ամէն. Ալէլուիա, Ալէլուիա, Ալէլուիա:

Օրհնեցի եւ սրբեցի՛ ջուրս այս՝ նշանաւ սուրբ Խաչիս եւ սուրբ Աւետարանաւ, եւ սրբալըս Միռոնաւ եւ սուրբ Հարճիւ. անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից:

Օրհնուի եւ սրբուի՛ այս ջուրը՝ սուրբ իսաչի այս նշանով, այս սուրբ Աւետարանով, այս սրբալոյս Միռոնով եւ այս օրուան յարուկ շնորհքովը, Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին սնունով, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից:

Երեք անգամ կրկնել ետք կ'ըստ.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնութիւն եւ փառք փանք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա սուրբ Միռոնէն կը թափէ աւազանին մէջ, խաչածեւ, երգելով.

ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ ՉԱՐԱԿԱՆ ԴՉ.

Առաքելոց սղարանոց իջններով մեծածայր հնչեցնամք ի բարձա՛նոց, ի նոննութիւն լուսոց փայլման հրազնեաց անկիւղելի զաշակերտան, մինչդեռ նստէի՛ն ի սուրբ Վերնատան՛ն:

Հօրմէն դրկուած աղաւնին [Ս. Հոգին] մեծագոյ շայնով փայլակի պէս բարչունքէն իջնելով՝ անկիզգելի կրակով զինեց աշակերտները, մինչ անոնք վերնատունը նստած էին:

Աննիթական սղարնի. անքննելի որ քննէ ըզիտրս Աստուծո՛յ. զոր սուեալ ի Հօրէ սրտամէ զաճաւոր եւ ըզմասանդամ՝ դարձ՛ւսան. զոր քարտղեցի՛ն համադոյակա՛ն:

Աննիթական է աղաւնին եւ անքննելի. սակայն ինք գիտէ Աստուծոյ ամենածածուկ ծրագիրները եւ Հօրմէն առնելով մեզի կը պատմէ Քրիստոսի տեսարանը երկրորդ գալուարին մասին: Ան համագոյակից է Հօրը:

Օրհնութիւն ի բարձունս, երզն ի Հօրէ Հոգւոյն Սրբո՛յ. որով առաքեալքն արբեցան սնունհական բաժակա՛ն, եւ հրաւիրեցի՛ն զերկիրս ի յերկի՛նս:

Բարչունքներուն մէջ օրհնութիւն Սուրբ Հոգիին որ Հօրմէն կը բղիթի. առաքեալներ անոր անմահական շնորհքներու բաժակէն խմեցին եւ երկիրը դէպի երկինք հրաւիրեցին:

Մինչ Կնքահայրը Աւազանին քով կը կանգնի, Քահանան հետեւեալ աղօթքը կը կարդայ.

ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, դուն որ քու այս ծառադ կանչեցիր որ մկրտութեամբ սրբուի եւ լուսատրուի, կ'աղաչենք՝ զայն արժանի՛ ըրէ քու մեծ շնորհքիդ: Թօթափէ՛ իր հին մեղքերը եւ նորոգէ՛ զինք՝ նոր կեանք մը պարգեւելով, եւ Սուրբ Հոգիիդ գօրութեամբ լեցուր, որպէսզի քու Քրիստոսիդ փառքովը նորոգուի: Որովհետեւ քեզի՝ հօգրիդ, Միածին Որդիիդ եւ ազատարար Սուրբ Հոգիիդ կը վայելեն իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանան կը հարցնէ Կնքահօր.

Երախան ի՞նչ կ'ուզէ:

Կնքահայրը կը պատասխանէ.

Հաւատք, Յոյս, Սէր եւ Մկրտութիւն: Կ'ուզէ մկրտուիլ եւ արդարանալ, մեղքերէ սրբուիլ, դեւերէն ազատիլ եւ Աստուծոյ ծառայել:

Երեք անգամ հարց-պատասխանը կրկնելէ ետք, Քահանան կ'ըստ.

Հաւատքիդ համաձայն թող ըլլայ:

Յետոյ Քահանան ջուրին մէջ կ'իջեցընէ երախան, եւ անունը դնելով կ'ըսէ.

[Այսինչ] անուն Աստուծոյ այս ծառան, երախայութենէ մկրտութեան գալով՝ կը մկրտուի Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Քրիստոսի արիւնով մեղքի ծառայութենէն գնուած ըլլալով՝ կը դառնայ երկնաւոր Հօրը որդեգիր, Քրիստոսի ժառանգակից եւ Սուրբ Հոգիին տաճար:

Այս բանաձեւը մէկ անգամ պիտի ըսէ, բայց երեք անգամ երախան ջուրին մէջ պիտի թաղէ՝ Քրիստոսի երեքօրեայ թաղման օրինակով:

**Այսպէս, ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ըսած ատեն կը կատարէ առաջին ընկղմումը,
ԵՒ ՈՐԳԻՆՅ-ին՝ երկրորդը,
իսկ ԵՒ ՀՈԳԻՆՅՆ ՍՐԲՈՅ-ին՝ երրորդը:**

Այսպիսով ամենասուրբ Երրորդութեան յիշատակութիւնը մէկ անգամ եղած կ'ըլլայ, իսկ ընկղմումը՝ երեք անգամ:

Ապա երախան ջուրէն հանելով կ'ըսէ.

Անգամ մը որ Քրիստոսի միացաք եւ մկրտուեցաք՝ այլեւս Քրիստոսը ձեր վրայ առած էք. Ալէլուիա:

Անգամ մը որ Հօրը դարձաք եւ լուսաւորուեցաք՝ Սուրբ Հոգին ձեր մէջ կը խայտայ. Ալէլուիա.

Փառք տանք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: